ԿԱՐԾԻՔ

***Արփինե Հունանի Առաքելյանի՝ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատումը (Հայաստանի Հանրապետության օրինակով)»* վերտառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ**

Արփինե Հունանի Առաքելյանի՝ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատումը (Հայաստանի Հանրապետության օրինակով)» վերտառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսությամբ բարձրացված հարցադրումներն արդիական են: Հեղինակն աշխատանքի ներածությունում հիմնավորել է թեմայի արդիականությունը, իսկ թեմային առնչվող առանձին հարցադրումների արդիականության վերաբերյալ փաստարկներ ներկայացվել են հաջորդիվ:

Ինչպես ընդգծել է հեղինակը՝ «Եվրոպական դատարանի վճիռները կոնկրետ գանգատի հիման վրա գործը լուծող վերջնական դատական ակտ լինելուց բացի հանդիսանում են Եվրոպական կոնվենցիայի պաշտոնական մեկնաբանություններ և իրենց գիտագործնական ու գիտատեսական նշանակությամբ էապես ազդում են իրավունքի զարգացման վրա, ինչում էլ դրևսորվում է Եվրոպական դատարանի վճիռների res interpretata բնույթը»: Այս առումով գնահատելի է հեղինակի կողմից ՄԻԵԴ-ի վճիռների ազդեցության գնահատման ողջ համակարգի բացահայտմանն ուղղված յուրահատուկ հետազոտության իրականացումը:

Աշխատանքի կառուցվածքը հաջող է ընտրված, այն ընդհանուր առմամբ հնարավորություն է տվել ուսումնասիրությունները կատարել ընտրված մեթոդաբանությանը համահունչ: Հեղինակին հաջողվել է գիտական ընդունելի մակարդակով. տեսական ու գործնական աղբյուրների օգտագործմամբ համակողմանիորեն հետազոտել և վերլուծել ՄԻԵԴ-ի վճիռների ազդեցության համակարգի տարրերը, ազդեցության գնահատման մեթոդները, ազդեցության ձևերն ու դրսևորումները և այլն: Կարծում եմ աշխատանքի արժանիքներից է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների իրավաբանական բնույթով պայմանավորված վճիռների ազդեցության ուսումնասիրության իրականացումը հատկապես Հայաստանի Հանրապետության օրինակով, ինչը հնարավորություն կընձեռի համարժեք վերանայելու ոչ միայն դատաիրավական պրակտիկան, այլև օրենսդրությունը և ողջ իրավական մշակույթը:

Կարծում եմ հեղինակին հաջողվել է դրսևորել նյութի հետազոտության անհրաժեշտ մեթոդաբանության ընտրության ինքնուրույնություն, ինչպես նաև եզրահանգումների և առաջարկների

բավարար չափով ինքնատիպություն: Պաշտպանության ներկայացված դրույթները հիմնականում համապատասխանում են գիտականության չափանիշին, միևնույն ժամանակ դրանց շարադրանքի առնչությամբ նկատառումները ներկայացվում են ստորև.

1. Աշխատանքի 16-րդ էջում հեղինակը նշում է, որ *«...Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության ձևերի տարանջատումն ու դրանցից յուրաքանչյուրին ինքնուրույն բովանդակության հաղորդումը պայմանավորված է Եվրոպական դատարանի վճիռների առանձնահատուկ իրավաբանական բնույթով, առանց որի բացահայտման հնարավոր չի լինի ամբողջական պատկերացում կազմել Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության համակարգի վերաբերյալ:»* Հաջորդիվ հեղինակը առաջին գլխի առաջին ենթագլխի շրջանակներում վերհանում է Եվրոպական դատարանի վճիռների բնութագրական հատկանիշները, սակայն դրանց կապը Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության համակարգի հետ արտացոլվում է մասնակի՝ աշխատանքի երկրորդ գլխի շրջանակներում միայն: Կարծում ենք՝ աշխատանքն առավելապես կշահեր և ընթերցողի համար առավել ակնհայտ կլինեին Եվրոպական դատարանի վճիռների իրավաբանական բնութով պայմանավորված ազդեցության դրսևորումները, եթե դրանք ներկայացվեին մեկ ենթագլխի շրջանակներում: Հակառակ պարագայում նման տարանջատված մոտեցումը ոչ նպատակային է թվում՝ հատկապես, որ հեղինակը բավականաչափ հիմնավորում է վերջիններիս փոխկապվածությունը:
2. Աշխատանքի երկրորդ գլխի առաջին ենթագլխի շրջանակներում անդրադառնալով Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատման ex post և ex ante տեսություններին՝ հեղինակն ընդգծում է առավել հաճախ ex post գնահատման տեսության կիրառման փաստը, այնուամենայնիվ չբացառելով այն իրավիճակները, երբ հնարավոր կարող է լինել իրականացնել Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատում ex ante տեսությանը համապատասխան: Կարծում ենք Եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատման համակարգի բովանդակությունն առավել ամբողջական բացահայտված կլիներ, եթե ex ante տեսության հնարավոր կիրառման օրինակներ առավել շատ լինեին:
3. Պաշտպանության ներկայացված 6-րդ դրույթը վերաբերում է Հայաստանի Հանրապետությունում իրավաստեղծ գործունեության նկատմամբ Եվրոպական դատարանի վճիռների ազդեցությանը: Հարկ է նշել, սակայն, որ հեղինակն անդրադարձել է միայն խորհրդարանի դերին ու գործառույթներին՝ իր դիտարկումներն ու առաջարկները ներկայացնելով միայն խորհրդարանական վերահսկողության առնչությամբ: Թեև աշխատանքի այլ հատվածներում հեղինակն անդրադառնում է գործադիր իշխանության կողմից օրենսդրական նախաձեռնությունների որոշ օրինակների, այնուամենայնիվ կարծում ենք, որ պաշտպանության ներկայացվող սույն դրույթի շրջանակներում իրականացված

հետազոտությունն առավել ամբողջական կլիներ և աշխատանքն առավելապես կշահեր, եթե հեղինակն անդրադառնար նաև իրավաստեղծ գործունեության մյուս սուբյեկտների. մասնավորապես՝ գործադիր իշխանության կողմից իրականացվող իրավաստեղծ գործունեության նկատմամբ Եվրոպական դատարանի վճիռների ազդեցությանը՝ հատուկ անդրադարձ կատարելով այս առնչությամբ Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչին (նախկինում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ) վերապահված դերին: Հաջորդիվ. հեղինակն առաջարկել է մարդու իրավունքների պաշտպանության կոնվենցիոն չափանիշներին օրենքների նախագծերի և գործող օրենքների համապատասխանության ստուգման գործիքակազմի կատարելագործման ուղիներ՝ մշտական հանձնաժողովների գործունեության ոլորտների ընդլայնման և խորհրդարանական մշտադիտարկման լրացուցիչ գործիքների նախատեսման եղանակով: Մեր կարծիքով՝ հեղինակի կողմից կարող էր քննարկման առարկա հանդիսանալ նաև այս նպատակով ad hoc աշխատանքային խմբերի ձևավորման և գործունեության կազմակերպման տարբերակը՝ զուգահեռաբար դիտարկելով այն մշտական հանձնաժողովների գործունեության ոլորտների ընդլայնման տարբերակի հետ՝ վեր հանելու համար յուրաքանչյուրի առավելությունները և թերությունները: Ավելին, հարկ էր անդրադառնալ նաև առաջարկվող լրացուցիչ գործիքների գործնական կենսագործման հարցին՝ հաշվի առնելով խորհրդարանի և մշտական հանձնաժողովների անդամների մասնագիտական կարողությունները, հնարավոր վերահսկողական լծակները և խոչընդոտների հաղթահարման ուղիները:

4. Թեև աշխատանքի երրորդ գլխի երրորդ ենթագլխում հեղինակը բավականին մանրամասնությամբ քննարկում է սահմանադրաիրավական նորմերի մեկնաբանման գործում Սահմանադրական դատարանին վերապահված բացառիկ դերակատարությունը, այնուամենայնիվ պաշտպանությաան ներկայացված 7-րդ դրույթի շրջանակներում հեղինակը նշում է, որ *«գործնականում ստեղծվում է իրական հնարավորություն ապահովելու ներպետական ու եվրոպական մակարդակներում միևնույն իրավունքի բովանդակային ծանրաբեռնվածության միատեսակ ընկալում՝ այն կանխատեսելիածով. որ յուրաքանչյուր դեպքում իրավակիրառողի կողմից Սահմանադրությամբ ամրագրված դրույթներին տրված մեկնաբանությունը պետք է համահունչ լինի Կոնվենցիայով երաշխավորվող նույն իրավունքի բովանդակությանը»:* Այսպիսով բավականաչափ հստակ չեն հեղինակի վերլուծության արդյունքներն այն հարցի կապակցությամբ, թե արդյոք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ազդեցությունը մարդու իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական երաշխիքների համատեքստում դիտարկվել է բացառապես Սահմանադրական դատարանի, թե բոլոր իրավակիրառողների նկատմամբ:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ պետք է փաստել, որ գրախոսվող ատենախոսությունը պատրաստված է գիտական պատշաճ մակարդակով: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի թվով 7 գիտական հրապարակումներում: Սեղմագրի բովանդակությունը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը:

Արփինե Հունանի Առաքելյանի՝ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների ազդեցության գնահատումը (Հայաստանի Հանրապետության օրինակով)» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այն համապատասխանում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով ատենախոսությանը ներկայացվող պահանջներին: Հեղինակը ցուցաբերել է գիտահետազոտական-վերլուծական ընդունակություններ, կատարել բազմակողմանի հետազոտություններ, ներկայացրել պատշաճ մակարդակի տեսագործնական աշխատանք, որի համար կարող է արժանանալ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի

ամբիոնի ասիստենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու

Վ. ՌԱՖԱՅԵԼՅԱՆ

23 հունիսի 2023թ.

Պաշտոնական ընդդիմախոս, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի

սահմանադրական իրավունքի ամբիոնի ասիստենտ,

իրավաբանական գիտությունների թեկնածու

Վահե Ռաֆայելյանի ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ

Հ. ԽԱՉԻԿՅԱՆ

-- հունիսի 2023թ.